

Հաքստհաուզէն միանգամայն ճիշդ է գնահատում պատմական երևոյթները, երբ նա ասում է, թէ «հայերը ուսական գրաւուժը երբեք չեն դիտել որպէս նուաճում, այլ՝ որպէս փափաքած ազատագրումն»:

Նա ճիշդ է դիտել իրականութիւնը նաեւ, ասելով, որ հայերը, այդ իսկ պատճառով «միակ ժողովուրդն են անդրկովկասեան երկիրներում, որ ամենամեծ հաւատարմութեամբ՝ եւ նուիրաւորութեամբ փարած են Ռուսաստանին»:

Բայց դրա հետ միասին՝ տեսէ՛ք ուս կառավարութեան գնահատութիւնը՝ ի տրիտուր հայ ժողովուրդի նուիրուած վերաբերմունքին:

Այդ տեսնելու համար հարկաւոր չէր մէկ դարու փորձառութիւն: Ռուս իշխանութիւնները իրենց տիրապետութեան առաջին իսկ օրերին ցոյց էին տուել իրենց սեփական դէմքը: Այդ եւս նկատել են օտարները, այդ եւս ընդգծում է Հաքստհաուզէն:

Վերը այդ տեսանք արդէն մէկ մասով, երբ Հաքստհաուզէն խօսում էր հայ ժողովուրդի կրթական ձգտումների մասին, որոնց առաջ ուսները ակներեւօրէն խոչընդոտներ էին հանում դեռ այն ժամանակ: Տարբեր չէ եղել ուսների վերաբերմունքը նաեւ հայ բարձր դասի հանդէպ: Համբաւաւոր «Պօլօթենիա»-ն եւս*) պարտադրուած էր հայերին:

Հաքստհաուզէն իր վերոյիշեալ խօսքին անհրաժեշտ է համարում կցել անմիջապէս, որ հայերի հաւատարմութիւնը «ուս պաշտօնեաների (միայն պաշտօնեաների*) կողմից դժբախտաբար չափէն աւելի պակաս է գնահատուած»**):

Դեռ Ներսէս Աշտարակեցու նման մի մարդու հանդէպ ցոյց տուած վերաբերմունքը բընորոշ է ինքնին: Այդ մասին եւս նոյն Աշտարակեցին, թէեւ մեղմ կերպով, արտայայտում է Հաքստհաուզէնի առաջ, երբ նա՝ խօ-

սելով ուս կառավարութեան քաղաքականութեան մասին հայոց վերաբերմամբ՝ դառնօրէն յիշատակում է այն փաստը, որ նրան, Աշտարակեցուն, ուսները քաղաքավարի կերպով Քիչնեվ էին աքսորել, թէեւ Առաջնորդ անուան տակ, ուր եւ «աքսորի մէջ», նա 15 տարի «համբերատար» տարել է իր վիճակը:

Վերջապէս, խօսք եղաւ արդէն այն մասին, թէ ուս կառավարութիւնը՝ որպիսի խտրական ոգի հանդէս բերեց անդրկովկասեան ժողովուրդների ներքին — իրական կարգերը քննելիս եւ նորերը սահմանելիս:

Դաւիթ Անանուն իր ծանօթ ուսումնասիրութեան մէջ իրաւամբ ընդգծում է այն փաստը, որ ուսները պարսիկներից գրաւած երկիրներում չգտան իսկական աւատականութիւն եւ կալուածատէր ազնուականութիւն, բայց ստեղծեցին իրենց ձեռքով, եւ այդ՝ յանձին քուրբ-քաքար քէկերի ու մեխիմենրի առաւելապէս, որոնց փաստական ճորտը դարձաւ այնուհետեւ հայ զիւղացիութեան մի ըզգալի մասը:

Ռուսները իրենց հարկւրամեայ տիրապետութեան ընթացքում բազմիցս վարչական — նահանգական, դաւառական եւ այլ կարգի — նորանոր բաժանումների ենթարկեցին Անդրկովկասը, բայց գրեթէ միշտ անտես արին հայութեան հողային-ազգագրական տարածման փաստը: Մինչեւ իսկ սկզբնապէս կազմուած «Հայկական Երջան» կոչուած փոքրիկ երկրամասն էլ, որ համարուած էր հայկական, վերացուեց յետագային ու նրա դաւառները կցուեցին Արեւմտեան Անդրկովկասի (վրացական հողամաս) եւ Արեւելեան Անդրկովկասի (թաթար-մահմ. հողամաս) վարչական միաւորներին: Դրա հետ միասին վերացուեցին մինչեւ իսկ՝ «Հայկական Երջան», «Ռուսական Հայաստան» յորջորջումները գրականութեան ու մամուլի էջերից: Աւելի ուշ միայն, վարչական նոր բաժանումների միջոցին, կազմուեց Երեւանի նահանգ միաւորը: Սրանից եւս դուրս մնացին սակայն Անդրկովկասի հայաբնակ լեռնային մասերը (Ղարաբաղ-Չանդեզուր, Լոռի-Ախալքալաք) ու կցուեցին թաթարական եւ վրացական դիտուած չրջաններին:

Յայտնի է, թէ այդ ցաւոտ ժառանգութիւնը՝ որչափ զլխացաւանք պատճառեց յետագա-

*) Տարօրինակօրէն Հաքստհաուզէն միայն գրական խօսքեր ունի այդ կանոնադրի մասին:

**) Բողեմշտէղտ շատ աւելի խիստ խօսքերով է դատափետում ուս կառավարութեան քաղաքականութիւնը հայոց հանդէպ: